# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*29-ը հունվարի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/*

*N 1-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16/3 և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 6, 35 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

ՈՐՈՇՈՒՄ Է.

- Հաստատել Աշտարակ համայնքի 2013թ-ի բյուջեի կատարման հաշվետվությունը:

| | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | Ընդ. |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 383441.4 | 40531.2 | 423972.6 |
| Ծախսային մաս | 352473.4 | 88123.9 | 440597.3 |

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՇԱՀԱՋԻՋՅԱՆ ԿԱՐԵՆ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ
ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*29-ը հունվարի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/*

## *N 2-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, 2014թ>-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ինչպես նաև ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով, առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16/3 և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32/5 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի եկամտային մասի նախագծի առաջարկությանը՝ համաձայն հատված 1-ի:
2. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի նախագծի առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
3. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի նախագծի առաջարկությանը՝ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման,համաձայն հատված 3-ի:
4. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին),համաձայն հատված 4-ի:
5. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին ՝ համաձայն հատված 5-ի:
6. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի նախագծի առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:
7. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝
   ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,
   բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15 %-ը:

/հազ.դրամ/

| | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | Ընդ. |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 394817.4 | 21000.0 | 394817.4 |
| Ծախսային մաս | 394817.4 | 44511.4 | 418328.8 |
| Դեֆիցիտ | ---- | -23511.4 | -23511.4 |
| Պահուստային ֆոնդ | 21000.0 | | |

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ -11* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՃՅԱՆ ԱՐՍԵՆ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՇԱՀԱՋԻՋՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ
ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*29-ը հունվարի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

***N 3 ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի հոդված 16/19, 60, <Բազմաբնակարան շենքերի կառավարման մասին> ՀՀ օրենքի 9/2, 17 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Աշտարակ համայնքի բազմաբնակարան շենքերի սպասարկման համար վճարը սահմանել 1 քմ-ի համար 20 /քսան/ դրամ:
2. Բազմաբնակարան շենքերի սպասարկման և վճարների գանձման իրավասությունը դնել <Բարեկարգում> ՀՈԱԿ-ի վրա:

ՈՐՈՇՈՒՄԸ ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*29-ը հունվարի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԾՆՈՂՆԵՐԻՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐԻ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/*

***N 4-Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի հոդված 16, կետ 18-ի պահանջներով, հիմք ընդունելով <Նախադպրոցական կրթության մասին> ՀՀ օրենքի 29/2-բ կետը, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Աշտարակ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում ծնողներից կամ նրանց ներկայացուցիչներից գանձվող վճարումների չափը սահմանել
   - Աշտարակ համայնքի բնակիչների համար՝ ամսական 5000 դրամ
   - Այլ համայնքի բնակիչների համար՝ ամսական 8000 դրամ:
2. Աշտարակ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններում ծնողների կամ նրանց ներկայացուցիչների վճարումները կատարել ամսական կտրվածքով՝ անկախ երեխայի հաճախած օրերի քանակի, բացառությամբ համաճարակների և նմանատիպ այլ դեպքերի:

<u>ԱՎԱԳԱՆԻ՝</u>

*ԿՈՂՄ - 8* *ԴԵՄ – 1* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | | |
|---|---|---|
| ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ | |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*29-ը հունվարի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/*

***<u>N 5-Ա ՈՐՈՇՈՒՄ</u>***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/19.1 և <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 1.2/16, <Աղբահանության և սանմաքրման մասին> ՀՀ օրենքի 5, 7, 19 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Աշտարակ համայնքի աղբահանության վճարների առանձնացված հաշվառման համար համաձայնություն տալ Աշտարակի քաղաքապետարանին՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության տեղական գանձապետական բաժանմունքում բացելու արտաբյուջետային հաշիվ:
2. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի արտաբյուջետային հաշիվ վերապահել <Աշտարակի կոմունալ ծառայություն> ՀՈԱԿ-ին:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

| *ԿՈՂՄ -10* | | *ՁԵՌՆՊԱՀ - 1* *ԴԵՄ – 0* |
|---|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ | |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ | |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*29-ը հունվարի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/*

***N 6-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի հոդված 16, կետ 26-ի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Աշտարակ համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակն ու դրույքաչափերը համաձայն կից հավելվածների:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ -10* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հաստատված է*
*համայնքի ավագանու*
*29.01.2014թ. N 6-Ա որոշմամբ*

Հավելված 1

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ

| N | Հաստիքացուցակ | Աշխատակիցների քանակը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Վարիչ/տնօրեն | 1 | 105000 | 105000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 80000 | 80000 |
| 3 | Բուժքույր | 1 | 60000 | 60000 |
| 4 | Տնտեսվար | 1 | 75000 | 75000 |
| 5 | Մեթոդիստ ուսումնական գծով տնօրենի տեղակալ | 1 | 120000 | 120000 |
| 6 | Գործավար/կադրերի պատասխանատու | 1 | 60000 | 60000 |
| 7 | Երաժշտության դաստիարակ | 1 | 120000 | 120000 |
| 8 | Դերձակ | 0,5 | 60000 | 30000 |
| 9 | Խոհարար | 1 | 75000 | 75000 |
| 10 | Հնոցապան/տարաբանվոր | 1 | 60000 | 60000 |
| 11 | Դաստիարակ | 5 | 120000 | 600000 |
| 12 | Դաստիարակի օգնական | 5 | 60000 | 300000 |
| 13 | Լոգոպեդ | 0,5 | 120000 | 60000 |
| 14 | Սոց մանկավարժ | 0,5 | 120000 | 60000 |
| 15 | Ֆիզկուլտ դաստիարակ | 0,5 | 120000 | 60000 |
| 16 | Պարուսույց | 0,5 | 60000 | 30000 |
| 17 | Դռնապան, Այգեպան, բակապան | 1 | 60000 | 60000 |
| 18 | Հավաքարար | 2 | 60000 | 120000 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | 24,5 |  | 2075000 |

Հավելված 2

## ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՍՏՈՒԴԻԱ

| N | Հաստիքացուցակ | Աշխատակիցների քանակը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 105000 | 105000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 70000 | 70000 |
| 3 | Հավաքարար | 1 | 60000 | 60000 |
| 4 | Տնօրենի օգնական /կադրերի պատասխանատու | 1 | 60000 | 60000 |
| 5 | Հանդերձապահ | 1 | 60000 | 60000 |
| 6 | Դռնապան | 1 | 60000 | 60000 |
| 7 | Պարուսույց | 5 | 70000 | 350000 |
| 8 | Բուժքույր | 0,5 | 60000 | 30000 |
| 9 | Պարուսույց, "Քասախ" համույթի ղեկավար | 1 | 70000 | 70000 |
| 10 | Ընտրովի դասաժամերի մանկավարժ | 1 | 70000 | 70000 |
| 11 | Երաժշտական ձևավորող | 1 | 60000 | 60000 |
| 12 | Նվագակցող | 2 | 60000 | 120000 |
| 13 | Տնտեսվար | 0,5 | 65000 | 32500 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | 17 |  | 1147500 |

Հավելված 3

## ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ

| N | Հաստիքացուցակ | Աշխատակիցների քանակը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 105000 | 105000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 65000 | 65000 |
| 3 | Գործավար/տնտեսվար | 1 | 60000 | 60000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Լաբորանտ | 1 | 60000 | 60000 |
| 5 | Դռնապահ | 1 | 60000 | 60000 |
| 6 | Հավաքարար | 2 | 60000 | 120000 |
| 7 | Մանկավարժ | 8 | 70000 | 560000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **15** | | **1030000** |

Հավելված 4

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

| N | Հաստիքացուցակ | Աշխատակիցների քանակը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն / մանկավարժ | 1 | 105000 | 105000 |
| 2 | Փոխտնօրեն / մանկավարժ | 1 | 60000 | 60000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 70000 | 70000 |
| 4 | բաժնի վարիչ | 2 | 70000 | 140000 |
| 5 | Գործավար | 1 | 60000 | 60000 |
| 6 | Գրադարանավար | 1 | 60000 | 60000 |
| 7 | Տնտեսվար | 1 | 70000 | 70000 |
| 8 | Լարող վարպետ | 1 | 60000 | 60000 |
| 9 | Հավաքարար | 3 | 60000 | 180000 |
| 10 | Մանկավարժ 1-ին կարգ- բարձրագույն կրթություն, 15 տարուց ավելի ստաժ | 7 | 75000 | 525000 |
| 11 | Մանկավարժ 2-ին կարգ- բարձրագույն կրթություն, մինչև 15 տարի կամ միջին մասնագիտական, 15 տարուց ավելի | 10 | 70000 | 700000 |
| 12 | Մանկավարժ 3-ին կարգ- միջին մասնագիտական կրթություն, 0-15 տարի ստաժ | 5 | 65000 | 325000 |
| 13 | Փականագործ/հնոցապան | 1 | 60000 | 60000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **35** | | 2415000 |

Հավելված 5

ՄԱՐԶԱԴՊՐՈՑ

| N | Հաստիքացուցակ | Աշխատակիցների քանակը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 70000 | 70000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 65000 | 65000 |
| 3 | Մարզիչ | 6 | 65000 | 390000 |
| 4 | Բուժքույր | 0,5 | 60000 | 30000 |
| 5 | Հավաքարար | 0,5 | 60000 | 30000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **9** | | **585000** |

Հավելված 6

ԱՐԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

| N | Հաստիքացուցակ | Աշխատակիցների քանակը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 90000 | 90000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 60000 | 60000 |
| 3 | Գրադարանավար | 1,5 | 70000 | 105000 |
| 4 | Դռնապան | 1 | 60000 | 60000 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **4,5** | | **315000** |

Հավելված 7

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

| N | Հաստիքացուցակ | Աշխատակիցների քանակը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 105000 | 105000 |
| 2 | Փոխտնօրեն | 1 | 65000 | 65000 |
| 3 | Հաշվապահ | 1 | 65000 | 65000 |
| 4 | Գեղմասվար | 1 | 85000 | 85000 |
| 5 | Տնտեսվար | 1 | 65000 | 65000 |
| 6 | Գործավար | 1 | 60000 | 60000 |
| 7 | Համակարգչային օպերատոր | 1 | 60000 | 60000 |
| 8 | Խմբի պատասխանատու | 1 | 60000 | 60000 |
| 9 | Խմբի պատասխանատու /սպորտ դպրոց/ | 3 | 65000 | 195000 |
| 10 | Լուսային օպերատոր | 1 | 60000 | 60000 |
| 11 | Ձայնային օպերատոր | 1 | 60000 | 60000 |
| 12 | Հսկիչ | 1 | 60000 | 60000 |
| 13 | հավաքարար | 2 | 60000 | 120000 |
| 14 | Պահակ | 3 | 60000 | 180000 |
| 15 | Բեմի բանվոր | 1 | 60000 | 60000 |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | 20 |  | 1300000 |

Հավելված 8

"Բարեկարգում" ՀՈԱԿ

| N | Հաստիքացուցակ | Աշխատակիցների քանակը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 170000 | 170000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 100000 | 100000 |
| 3 | Գլխավոր ինժեներ | 1 | 140000 | 140000 |
| 4 | Վարորդ-կոյուղագործ | 1 | 106000 | 106000 |
| 5 | Լուսավորության համակարգի պատասխանատու | 2 | 106000 | 212000 |
| 6 | |Գնումների համակարգող | 1 | 120000 | 120000 |
| 7 | Տարաբանվոր | 6 | 100000 | 600000 |
| 8 | Անձնագրավար | 2 | 90000 | 180000 |
| 9 | Տկտ-ի պետ /պատասխանատու/ | 6 | 100000 | 600000 |
| 10 | Տարաբանվոր | 10 | պայմ. |  |
|  | ԸՆԴԱՄԵՆԸ | 31 |  | 2228000 |

Հավելված 9

"Կոմունալ" ՀՈԱԿ

| N | Հաստիքացուցակ | Աշխատակիցների քանակը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 150000 | 150000 |
| 2 | Փոխտնօրեն | 1 | 130000 | 130000 |
| 3 | Գերեզմանատան պատասխանատու | 1 | 120000 | 120000 |
| 4 | Գերեզմանատան "Ձախ ափ" տեղամասի պատասխանատու | 1 | 90000 | 90000 |
| 5 | Հաշվապահ | 1 | 135000 | 135000 |
| 6 | Հաշվետար | 1 | 90000 | 90000 |
| 7 | Վարորդ | 6 | 120000 | 720000 |
| 8 | Մեխանիզատոր | 1 | 135000 | 135000 |
| 9 | Բանվոր | 7 | 106000 | 742000 |
| 10 | Հավաքարար | 12 | 95000 | 1140000 |
| 11 | Հաշվառիչ | 5 | Պայմ. |  |
| ԸՆԴԱՄԵՆԸ |  | 37 |  | 3452000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ Ո Ւ Մ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*29-ը հունվարի 2014թ.*

## <ՄԽԻԹԱՐ> ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴ <ԾԻԼԻՆ> ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Հ. Բաղդասարյան/*

## *N 7-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Նկատի ունենալով այն հանգամանքը, որ <Մխիթար> /ներկայումս <Ծիլին>/ արտադրական կոոպերատիվին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 21.05.1990թ. N 239 որոշմամբ Աշտարակի նախկին խորհտնտեսության հողերից գյուղատնտեսական նպատակների համար հատկացվել է 3.0հա հողամաս, որի նկատմամբ կոոպերատիվը չի կարողանում ՀՀ հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի համաձայն գրանցել իր իրավունքն այն պատճառով, որ նշված տարածքից, որը գտնվում է <Վառոյի Չորակ> թաղամասում Աշտարակի նախկին խորհտնտեսության դիրեկտորի 20.11.1991թ. N64 հրամանով 1.3հա որպես տնամերձ հողամասեր հատկացվել է Աշտարակ քաղաքի բնակիչներին, իսկ մնացած մասը քարտեզագրվել և ՀՀ կառավարության 07.09.2006թ. N 1398-Ն որոշմամբ որպես բնակավայրերի նշանակության հողամաս հանձնվել է համայնքին, հիմք ընդունելով <Ծիլին> կոոպերատիվի նախագահ Ե. Արամյանի դիմումը՝ համայնքային սեփականություն հանդիսացող այլ տեղամասից գյուղատնտեսական նշանակության 3.0հա հողամասի նկատմամբ կոոպերատիվի հողօգտագործման իրավունքը վերականգնելու մասին, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ կետի, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի որոշմանը՝

1. Վերականգնելու <Մխիթար> կոոպերատիվի իրավահաջորդ <Ծիլին> արտադրական կոոպերատիվի հողօգտագործման վարձակալության իրավունքը՝ համայնքային սեփականություն հանդիսացող 526-010 ծածկագրից 3.0հա գյուղատնտեսական նշանակության արոտի նկատմամբ 25 տարի ժամկետով՝ տարեկան 50 000 դրամ վարձավճարով, գնման նախապատվության իրավունքով:
2. Չեղյալ ճանաչել համայնքի ավագանու՝ ըստ ՎԴ 0684/05/10 վարչական գործի <Ծիլին> կոոպերատիվի և Աշտարակի քաղաքապետարանի միջև կնքված հաշտության համաձայնագրի պահանջների կատարման մասին 29.11.2011թ. N16-Ա որոշումը և հաստատել նոր համաձայնագիր:

## ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ -10* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՇԱՀԱՋԻՋՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*29-ը հունվարի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ <ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ> ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Մ. Հովհաննիսյան/*

***N 8-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/2 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Աշտարակի քաղաքապետարանի աշխատակազմի <Ենթակառույցների համակարգման և ծրագրերի> բաժնի կանոնադրությունը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ -11* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ
ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ
ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ
ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հաստատված է*
*Աշտարակ համայնքի ավագանու*
*29.01.2014թ. N 8-Ա որոշմամբ*

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ

- Ենթակառույցների համակարգման և ծրագրերի բաժինը Աշտարակի քաղաքապետարանի կառուցվածքային միավոր է
- Իր գործունեության ընթացքում բաժինն առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ գործող օրենքներով, Աշտարակի քաղաքապետի որոշումներով և կարգադրություններով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ
- Բաժինն իր գործունեությունն իրականացնում է քաղաքապետարանի մյուս բաժինների, համապատասխան հիմնարկների, ինչպես նաև ստեղծագործական միությունների և հասարակական կազմակերպությունների հետ փոխօգնության և փոխշահավետ համագործակցության հիմունքներով
- Բաժնի հաստիքացուցակը ներկայացնում է համայնքի ղեկավարը, որը հաստատում է համայնքի ավագանու կողմից, բաժնի պետը նշանակվում և ազատվում է քաղաքապետի, իսկ բաժնի տեղակալն ու աշխատակիցները նշանակվում և ազատվում են աշխատակազմի քարտուղարի կողմից
- Վարձատրության չափը օրենքով նախատեսված սահմաններում որոշում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի ղեկավարը բյուջեով նախատեսված աշխատավարձի ֆոնդի սահմաններում

### ԲԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Քաղաքապետի և /կամ/ քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է իրավական ակտերի, նախագծերի, ծրագրային փաստաթղթերի մշակումը և նյութերի փորձաքննությունը

- կոորդինացնում է տրանսպորտի ոլորտի վերաբերյալ քաղաքապետի որոշումների և կարգադրությունների կատարման օպերատիվությունն ու արդյունավետությունը, ներկայացնում է առաջարկություններ այդ ոլորտի աշխատանքների կազմակերպման և իրականացման ուղղությամբ
- վերահսկում է տրանսպորտի ոլորտի համայնքային կանոնների կատարումը
- վերահսկում և իրականացնում է աշխատակազմում աշխատանքների, ծառայությունների և ապրանքների գնումների գործընթացի գործառույթները, ապահովում է պայմանագրի կնքումը

- օժանդակում է համայնքային ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների /ՀՈԱԿ/ կողմից իրականացվող գնումների գործընթացին

- աջակցում է համայնքի տարածքում համատիրությունների ստեղծմանը
- աջակցում է քաղաքի բնակչության հաշվառումն ու շարժը կանոնակարգելու աշխատանքներին
- կազմակերպում և կառավարում է կրթության, մշակույթի, սպորտի և սոցիալական հարցերի ոլորտները
- քաղաքի տարածքում համակարգում է առևտրի և ծառայությունների ոլորտի՝ քաղաքապետարանի իրավասությունների շրջանում գտնվող գործառույթները
- համակարգում է տուրքերի և վճարների հավաքագրման աշխատանքները
- կոորդինացնում է տոների, հիշատակի օրերի, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի երիտասարդության հետ տարվող աշխատանքները
- իրականացնում է պաշտոնատար անձանց այցելությունների հետ կապված արարողակարգային միջոցառումների համար անհրաժեշտ տնտեսական, տրանսպորտային ու նյութական աշխատանքները
- կազմակերպում է քաղաքացիների դիմում-բողոքների, սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում աշխատակազմի քարտուղարին
- մասնակցում է համայնքի զարգացման ծրագիր կազմելու և դրանց իրականացման աշխատանքներին
- կոորդինացնում է դոնորներ գտնելու, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելու և քաղաքում ծրագրեր իրականացնելու աշխատանքները
- հաշվի առնելով առկա հնարավորությունները կազմակերպում, ամփոփում և առաջարկություններ է ներկայացնում քաղաքային տնտեսության զարգացման և բնակչության զբաղվածության ապահովման միջոցների վերաբերյալ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ Ո Ւ Մ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*29-ը հունվարի 2014թ.*

## ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՐՇԱԿ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 02-001-0694-0064 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 2010ՔՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Կ. Հովեյան/*

***N 9-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով ՀՀ կառավարության 30.07.1998թ. հմ. 479 որոշման պահանջներով, հիմք ընդունելով Ա. Մելիքյանի 17.01.2014թ. հմ. 31 դիմումը, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հավանություն տալ Արայի տեղամասի 02-001-0694-0064 ծածկագրում գտնվող, Արշակ Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող 2010քմ գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նպատակային նշանակությունը՝ ավտոգազալցամձնշակայան կառուցելու համար բնակավայրերի հասարակական կառուցապատման փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներկայացված առաջադրանքի նախագծին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ -10* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*29-ը հունվարի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱԿՏՈՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Կ. Հովեյան/*

## *N 10 -Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1] հոդվածի, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1–ին մասի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Համաձայնություն տալ գոյություն ունեցող հասարակական նշանակության օբյեկտի /դեղատուն/ ընդլայնման համար կառուցապատման իրավունքով Արշալույս Տանուտերյանին դեղատանը կից 13.8քմ հողատարածքը տրամադրելու 20 տարի ժամկետով՝ տարեկան 20 000 ՀՀ դրամ վճարով:
2. Համաձայնություն տալ կառուցապատման իրավունքով <ՀԷՑ> ՓԲԸ-ին Ռիլատիտիկ-2 թաղամասում 20քմ հողատարածք տրամադրելու 30 տարի ժամկետով՝ տարեկան 50 000 ՀՀ դրամ վճարով, ենթակայան տեղադրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՎԱԳԱՆԻ՝**

*ԿՈՂՄ -10* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*29-ը հունվարի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Կ. Հովեյան/*

***N 11 -Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1–ին մասի 20-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համայնքի սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ -11* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |
| ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հավելված 1*

*Հաստատված է*
*համայնքի ավագանու*
*29.01.2014թ. N 11-Ն որոշմամբ*

Հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի վճարը %/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողատարածք | Աշտարակի տեղամաս | 440-023 | 2500 | գյուղ. | արոտ | | 100 | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ Ո Ւ Մ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*29-ը հունվարի 2014թ.*

ՀԿՄ <ԱՇՏԱՐԱԿԻ ՈՒԱԶ> ՍՊԸ-Ի ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Ս. Մաղաքյան/*

## *N 12 -Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով <Գույքահարկի մասին> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի կույրերի միավորման <Աշտարակի ուսումնա-արտադրական ձեռնարկություն> ՍՊԸ-ի 26.07.2013թ. հմ. 01-6/02 գրությունը գույքահարկը զիջելու մասին, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հայաստանի կույրերի միավորման <Աշտարակի ուսումնա-արտադրական ձեռնարկություն> ՍՊԸ-ի /Գր. Լուսավորչի 5/ գույքահարկը զիջել – 594.800 դրամ:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9*　　*ԴԵՄ – 0*　　*ՁԵՌՆՊԱՀ -0*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ　　ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ　　ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ　　ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ　　ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝　　Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*29-ը հունվարի 2014թ.*

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28.12.2005Թ. N 3-Ա/7 ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԱԶԱՏ ՄԱԿԵՐԵՄՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ 1ՔՄ-Ի ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող ՝ Հ. Խաչատրյան/*

***N 13 -Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով արված հաշվարկներն ու հիմնավորումները կոմունալ /էլ. էներգիա, կոյուղի և ջուր/ վճարների թանկացման մասով և ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/20, <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Չեղյալ համարել համայնքի ավագանու 28.12.2005թ.-ի N 3-Ա/7 որոշումը:
2. Քաղաքապետարանի վարչական շենքի ազատ մակերեսները վարձակալության տրամադրել 1քմ-ը 1500 ՀՀ դրամով:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ
ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*29-ը հունվարի 2014թ.*

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.10.2013Թ. N 9-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Հ. Խաչատրյան/*

## *N 14 -Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/20 և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին*

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Աշտարակ համայնքի ավագանու 08.10.2013թ.-ի N 9-Ա որոշման մեջ ավելացնել՝
   - Ավտոտնակներն օգտագործման տրամադրելու վերաբերյալ պայմանագրերի ժամկետ սահմանել մինչև 5 տարի:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ
ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ
ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ
ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ
ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ
ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ
ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*29-ը հունվարի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՎԵԼԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Ա. Անտոնյան/*

***N 15-Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 31/6, <Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 26/1.բ, <Պետական և ծառայողական գաղտնիքի մասին> ՀՀ օրենքի 8/4 հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 05.11.1997թ.-ի հմ. 487 որոշումը և Աշտարակի քաղաքապետի 28.09.2011թ.-ի հմ. 240-Ա կարգադրությունը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Աշտարակի քաղաքապետարանի աշխատակազմում պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործմամբ աշխատանքների կատարումը վերապահել աշխատակազմի քարտուղար Գրիգոր Դատումյանին՝ սահմանելով հավելավճար աշխատավարձի 15%-ի չափով:
2. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար ներքոհիշյալ համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանել հավելավճար.
   - Սերգեյ Մաղաքյան – համայնքային ծառայության 1-ին դասի առաջատար ծառայող- 30000 դրամ
   - Զոհրաբ Գևորգյան- համայնքային ծառայության 3-րդ դասի խորհրդական - 30000 դրամ
   - Անուշ Արամյան – համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայող – 20000 դրամ
   - Շողիկ Հովհաննիսյան-համայնքային ծառայության 3-րդ դասի առաջատար ծառայող- 20000 դրամ
3. Սույն որոշումն ուժի մեջ է 2014թ.-ի փետրվարի 1-ից:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

*ԿՈՂՄ -11* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՕՎՈՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ |
| ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |
| ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն